## *Շարժական ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների գնման ՊԱՅՄԱՆԱԳԻՐ*

## *N ՀՀ ԳՄ ՇՀԾՁԲ-11/1-1*

ք. Գավառ <<_03_>>__փետրվարի_ 2015թ.

«ՀՀ Գեղարքունիքի Մարզպետարանը» -ը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Օրանժ Արմենիա ՓԲԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ֆ.Ժելիբտերի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Շարժական ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված Ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունները և վճարել դրա համար

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը

2 1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5 3 կետով նախատեսված տույժը

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը,

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3 1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Ծառայության արդյունքը:

2.3 2 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5 5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայությունների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Ծառայությունների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3)

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը.

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով Կապալառուի կատարված Ծառայության ընդհանուր գինը կազմում է 360000(երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից. Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Ծառայության կատարման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար.

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով.

5.6 Սույն պայմանագրով՝ չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններր լրիվ կատարելուց

6. Անհաղթահերելի ուժի ազդեցություն /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն.պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2015թ. դեկտեմբերի 25-ը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում. արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.3 . Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

7.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7 6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից. կնքվում է երկու օրինակից. որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Սույն պայմանագրի NN 1,2,3,և 4 հավելվածները՝ բաղկացած 4 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը,յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ

7 7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության.

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը

## 10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
ՀՀ ֆինանսների նախարարություն գործ.վարչ
Հ/Հ 900171078299
Աշխատակազմի ղեկավար՝
--------------Ս.Խլղաթյան
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Օրանժ Արմենիա ՓԲԸ
Ք Երևան,Գր.Լուսավորչի 9
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048054007106
Գլխավոր տնօրեն՝
[illegible]
[illegible]

Հավելված 1
«03 » փետրվարի 2015 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ՇՀԾՁԲ-11/1-1 գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | Տեխնիկական բնութագրերի տարրերը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | Մոդեմի թողունակությունը | 21.6մ գբ/վրկ |
| 2 | Գերարագ ինտերնետի չափը | 20գ գբ |
| 3 | Կապի հիմնական արագությունը /գերարագից հետո/ | 512կ բ/վրկ |
| 4 | Մոդեմների քանակը | 5/հինգ/ հատ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ.ք.Գավառ,Կենտր Հրապարակ 7
ՀՎՀՀ 08404767
Հ Հ 900171078299
ՀՀ Ֆինանսների նախարարություն գործ վարչ.
Աշխատակազմի ղեկավար
------------Ա Խլղաթյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

Օրանժ Արմենիա ՓԲԸ
Ք.Երևան,Գր.Լուսավորչի 9
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048005400710
Գլխավոր տնօրեն
------------Բ.Փերեստի
(ստորագրություն)

Հավելված 2
« 03 » փետրվարի 2015 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ՇՀԾՁԲ-11/1-1 գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկան ծառայության անվանումը | Չափի միավորը | Գնման ենթակա ծառայության քանակը 2015թ -ին՝ ըստ եռամսյակների | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | |
| 1 | Շարժական ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ | դրամ | 90000 | 90000 | 90000 | 90000 | 360000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ 08404767
ՀՀ ֆին նախ գործ վարչ.
Հ/Հ 900171078299
Աշխատակազմի ղեկավար
----------Ս Խլղաթյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Օրանժ Արմենիա ՓԲԸ
Ք.Ե[illegible] ուսավորչի 9
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048054007106
[illegible]
Տ.Մելիքսեթ
[illegible]

Հավելված 3
«03 » փետրվարի 2015 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ՇՀԾՁԲ-11/1-1 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N ը/կ | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Շարժական ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ | | 60000 | 90000 | 120000 | 150000 | 180000 | 210000 | 240000 | 270000 | 300000 | 330000 | 360000 | 360000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ,ք.Գավառ,Կենտր.Հրապարակ 7
ՀՎՀՀ 08404767
ՀՀ 900171078299
ՀՀ ֆին.նախ գործ վարչ.
Աշխատակազմի ղեկավար
-----------------Ս.Խլղաթյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Օրանժ Արմենիա ՓԲԸ
ք.Երևան Գր Լուսավորչի 9
ՀՍԲԿ Հայաստան բանկ ՓԲԸ
ՀՀ 1660048054007106
Գլխավոր տնօրեն
------- Ժելիբտեր
(ստորագրություն)

Հավելված N 4
03-փետրվարի- 2015թ. կնքված
N ՀՀ ԳՄ ՇՀԾՁԲ-11/1-1 գնման պայմանագրի

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «________________» 20   թ
Պայմանագրի անվանումը՝ ______________________________________

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20   թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________ և
Կատարողը՝ ի դեմս____________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ____ ____________ 20___թ-ից __ __________ 20__ թ ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |